Տեղեկատվություն

ՀՀ Շիրակի մարզի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության 2025 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործում է թվով 20 բժշկական հաստատություն, որոնցում ծավալված մահճակալների թիվը 26 է, աշխատակիցների թիվը՝ 891 ։

ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի թիվ 194-Ն որոշմամբ «Գյումրի բժշկական կենտրոն», «Ախուրյանի բժշկական կենտրոն», «Արթիկի բժշկական կենտրոն» և «Գյումրի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ների բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվեցին ՀՀ առողջապահության նախարարությանը։

2025 թվականին վճարովի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների գումարը կազմել է 166458.1հազ.դրամ։ 2024 թվականի համեմատ /161865.6 հազ. դրամ/ ավելացել է 4592,5 հազ. դրամով։

2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ մարզի բժշկական կազմակերպությունների դեբիտորական պարտքը կազմում է 11051.3 հազ.դրամ։ 2024 թվականի համեմատ /27470.9 հազ.դրամ / նվազել է 16419,6 հազ.դրամով։ 2025 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ մարզի բժշկական կազմակերպությունների կրեդիտորական պարտքը՝ 120490.4 հազ. դրամ։ 2024 թվականի համեմատ /72613.7 հազ.դրամ / աճել է 47876,7 հազ. դրամով։

ՀՀ Շիրակի մարզում 2025 թվականին գրանցվել է 2226 ծնունդ, նախորդ տարվա համեմատ /2495/ այս ցուցանիշը նվազել է 269-ով ։

2025 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ, ՀՀ առողջապահության նախարարության ֆինանսավորմամբ «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ում կատարվել է 6,590,000 հազ.դրամ արժողությամբ հատակի և վթարային աստիճանավանդակի վերանորոգում։

2025 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության բժշկական հաստատությունները հագեցվել են ժամանակակից բժշկական սարքավորումներով, մասնավորապես.

«Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է 13,625,000 հազ.դրամ արժողությամբ 2025

թվականի արտադրության Geepas թվային շարժական ռենտգեն սարք և ԱԳԲԱ լիզինգ վարկային կազմակերպության միջոցով ձեռք է բերել 5,650,000 հազ.դրամ արժողությամբ 2024 թվականի արտադրության Mindrey մակնիշի սոնոգրաֆիկ սարք։

«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ն Գյումրու «Ռոտարի ակումբի» նվիրաբերած միջոցների հաշվին ձեռք է բերել 18,064,800 հազ. դրամ արժողությամբ GXR-EC5OS թվային ռենտգեն սարք։

«Գյումրու Վ.Աբաջյանի անվան Ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲԸ-ն հագեցվել է 500.000 հազ. դրամ արժողությամբ տարածքի անվտանգության պահպանման համակարգով։

«Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ 2025 թվականին ձեռք է բերել 2025 թվականի արտադրության 400,000 հազ. դրամ արժողությամբ DSX-IV.C մակնիշի հղիության արհեստական ընդհատման էլեկտրական ներծծիչ։

«Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ ՀՀ առողջապահության նախարարարության կողմից հատկացվել է 5,300,000 հազ. դրամ արժողությամբ Mindrey մակնիշի սոնոգրաֆիկ սարք։ Բուժհաստատությունը նվիրաբերված միջոցների հաշվին ձեռք է բերել 703,000 հազ. դրամ արժողությամբ 2025 թվականի արտադրության УЗТ1,02Ф մակնիշի ուլտրաձայնային թերապիայի սարք։

«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին «Աշոցքի ԱՏԾ» ՓԲԸ-ի կողմից նվիրաբերվել է 150,000 հազ. դրամ արժողությամբ լաբորատոր ցենտրիֆուգ։

ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 12-ի թիվ 488-Ն որոշմամբ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում «Բուժական գործ» մասնագիտությամբ ՀՀ Շիրակի մարզին տրամադրվել է նպատակային ուսուցման 5 տեղ։ Թվով 11 դիմորդի տրամադրվել է տեղեկանք նպատակային տեղերի մրցույթին մասնակցելու նպատակով։

Առողջական խնդիրներ ունեցող թվով 35 երեխայի տրամադրվել է Ջերմուկ «Արարատ» մոր ու մանկան առողջարանի և «Ապարան» վերականգնողական-առողջարանային կենտրոնի ուղեգրեր։

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի բազմամասնագիտական խմբի կողմից խնամատար ընտանիքում հոգեզավակի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր ամիս կատարվել են այցեր թվով 5 խնամատար ընտանիքներ։

2025 թվականի ընթացքում ուսումնասիրվել և թվով 14 երեխա որդեգրել ցանկացող անձի տրվել է որդեգրման հնարավորության դրական եզրակացություն:

2025 թվականի ընթացքում առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն է մակագրվել ՀՀ վարչապետին ուղղված և ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ վերահասցեագրված, ՀՀ Շիրակի մարզպետին ուղղված, ինչպես նաև այլ մարմիններից ստացված ֆինանսական օգնություն ստանալու վերաբերյալ 1198 դիմում: Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի քննարկմանն է ներկայացվել 798 քաղաքացու դիմում: ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշումներով 344 քաղաքացու տրամադրվել է ֆինանսական օգնություն: Բոլոր դիմումներին սահմանված ժամկետներում տրվել են գրավոր պատասխաններ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Լ.ԱՍԼԱՆՅԱՆ